

A GOOD
ADVERTISING
MEDIUM

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

THE CITIZEN

THE ONLY
ARMENIAN
PAPER
Published in
California.

VOL. I. NO. 17

FRESNO, CAL. SATURDAY, DEC. 6, 1902.

PRICE, 5 CENTS.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 17.

ՖՐԵՆՕ. ԲԱԼ. ՇԱԲԱԹ. ԴԵԿՏ. 6, 1902

ԳԻՆ 5 ՍԵՆԹ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ամեն անոնք որ Գաղափարացի կրօնականն և երեք շաբաթ շարունակ կը պահեն զայն՝ մեր կողմէն կանոնաւոր բաժանորդ կը նկատուին: Իսկ անոնք որ չեն փափաքիր բաժանորդագրուիլ Շաբաթաթերթիս՝ կը խնդրենք որ հաճին զայն մեզ վերադարձնել անմիջապէս, որպէս զի իրենց անունները չնշենք մեր ցանկէն:

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսէն Նոյեմբեր 24 թուականաւ լուր կուտան Լոնտոն թէ Թուրք կառավարութիւնը՝ հակառակ իր վերջերս ըրած բազմաթիւ հերքումներուն՝ Մակեդոնացիները ջախջախելու համար՝ ծայրայեղութեանց ուսուցիչի բարբարոս միջոցներու գիծել սկսած է վերջերս: Չմեռը սկսած ու յեղատիտական շարժումները դադարած ըլլալով՝ Սուլթանի ներկայացուցիչները՝ իրենց դժոխային գործը սկսելու յարմարագոյն ժամանակը գտած ըլլալ կը խորհին եղեր: Հակառակ այն ընդհանուր ներողութեան որ խոստացուած էր՝ իրենց տունները վերադարձող գիւղացիներուն՝ կառավարութիւնը սկսած է չարչարանաց ենթարկել զանոնք և ստիպել որ մասնեն յեղափոխական խումբերը և ցուցնեն այն ահղերը ուր անոնց ռազմամթերքը պահուած կը մնան: Արեւելեան "Պալատան" այն աստիճանի անգրթութեամբ ի գործ կը դրուի եղեր այս գժբախտներուն վրայ որ այդ բովէն անցնող մէկը կանգամալուծուի կամ կաղ կը մնայ անպատճառ: Շատերը իրենց ոտքերէն կը կախուին ցուրտ օդին մէջ, ու եռացած հաւկիթներ կը դրուին անոնց ոտքերուն տակ ու մարմնոյ տարրեր մասերուն վրայ: Թուրք զօրքերը՝ ցորեկ ժամանակ գիւղերն ու գիւղացիներ կը կողոպտեն՝ առանց քաշուելու կամ վախնալու բարձրագոյն սյլ մեղսակից իշխանութենէն:

Հայաստանի վիճակը մասամբ պատկերացնող նկար մը եղած ըլլալ կը թուի՝ Տաճկաց այս վերջի բարբարոսութեանց պատմութիւնը:

—Միացեալ Նահանգաց Օրէնդիր բարձրագոյն մարմինը (Քօնկրէսը) բացուեցաւ ամսոյս մէկին: Նախագահ Բուզուէլթի տեղեկագիրը կարգացուեցաւ անոր՝ Հեաւեալ օրը, որուն ժողովրդի ներկայացուցիչները մտիկ ըրին խորին ուշադրութեամբ: Տեղեկագիրը ընդարձակ ու խնամով պատրաստուած գրութիւն մ'է որ

ԲԸԹՆԸՐ ԿՈՒՏԱԹԻՆ ԲԸՄՓԸՆԻ

Ֆրէզնոյի **KUTNER-GOLDSTEIN** Ֆրէզնոյի
ՄԵԾ **THE HOUSE THAT** լաւագոյն
Խանութքը **SAVES YOU MONEY** Խանութքը

**** ԾՆՈՒՆԴԻ ՆՈՒԷՐՆԵՐ ****

Հօրը, Մօրը, Գրողը, Եղբօրը — և ամեն մարդու համար Մեծ քանակութեամբ ապրանք՝ անկէ ընտրելու համար. ամենափոքր գիներ: Բարի գալուստ նայելու եկողներուն:

մանրամասնարար կը տեղեկագրէ շատ մը խնդիրներ, ու կը յանձնարարէ օրէնսդիրներուն կարգ մը կարեւոր հարցեր որոց լուծումը աւագ կարեւորութիւն ստացած է արդէն:

—Ըսթ. քէօմէն կը հեռագրեն թէ Շուէտի Հիւսիսային կողմերը սաստիկ սոլ մը կը տիրէ, և թէ եօթանասուն հազար ժողովուրդ սովամահ լինելու վտանգի մը մէջ է այժմ: Յորդառատ անձրևներ քակեր ու քանդեր են եղեր անհամար տուններ ու ոչնչացուցած են՝ ամեն կանանչեղէն ու արօտավայր:

—Անցեալ կիրակի օր կէսօրէ վերջ Երիցական եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ նոյն եկեղեցւոյ անդամոց ընդհանուր ժողովը՝ աստենապետութեամբ Մ. Վալթընի, որ երիցական ընդհանուր եկեղեցիները կառավարող երէցներու բարձրագոյն ժողովին կողմէ կարգուած էր ժամանակ առաջ՝ իբր չափաւորիչ (մօտէրէյթըր) կամ միջնորդ պաշտօնեայ՝ Հայոց դժուարութիւնները յարգելու պաշտօնով:

Օրինական ինչ ինչ գործողութիւններէ վերջ՝ եկեղեցւոյն այժմեան երէցները՝ Տեաք Յ. Քրոճեան, Արշակ Պետրոսեան և Յակոբոս Ալլանեան իրենց հրաժարականները տուին. Ժողովը՝ այս հրաժարականները ընդունելէ վերջ քուէարկութեան ձեռնարկեց՝ նոր ընտրութիւն ընելու համար: Քուէից առաւելութեամբ այդ պաշտօնին ընտրուեցան Տիարք Աւետիս Գազրամանեան, Հ. Յովհաննէս Առաքելեան և Մ. Սանդիկեան:

—Նոյն երեկոյ ժամը եօթն ու կէսին տեղի ունեցաւ նոյն եկեղեցւոյ մէջ՝ շէնքի շինութեան յանձնարարի ժողովը: Հաշուառու մասնախումբը, որ ժամա

նակ առաջ ընտրուած էր՝ գանձապետի ծախուց հաշուեկշիռը ստանալու և քննելու պաշտօնով՝ իր գործը լրացուցած ըլլալով նոյն հաշուեկշիռը յանձնեց յանձնախմբին: Հաշուառուներու երկուքը թէև վաւերացուցած էին հաշուեկշիռը, սակայն մին գոհ չըլլալով մերժած էր ստորագրել:

Յանձնախումբը մասնատողով մը ընտրեց՝ ապառիկները գանձելու պաշտօնով: Տ. Մինասեան և Փրօֆէսօրք Մելգոն և Մալարեան յանձն առին այս ապառիկներու մէկ մասը գանձելու աշխատի:

Գարնան օդերուն պէս՝ Երիցական Եկեղեցւոյ գործերը փոփոխական են այս օրեր: Երէցներու հրատարիլը յոյսի աստղ մ'է սև ամպերուն մէջ, և իրաց այժմեան վիճակը մխիթարական ըլլալ կը թուի: Բայց

—Թ. Պ. Խունկեան Մօրնինկ Րեփրայիքընի մէջ նամակ մը հրատարակած է անցեալ Չորեքշաբթի օր բողոքելով նոյն թերթի մէջ հրատարակուած այն լուրին դէմ թէ Հայ Երիցական Եկեղեցւոյ մէջ խաղաղութիւնը և եղբայրութիւնը տիրած է եղեր վերջապէս: Նամակագիրը կըսէ թէ ոչ միայն վերքը բուժուած չէ տակաւին՝ այլ աւելի խորունկ է հիմայ քան երբէք: Էլարներու հրատարիլը ստիպումի ներքև տեղի ունեցած գործ մը կը նկատէ: Եկեղեցւոյ մէջ, կը զրէ թէ, կայ խումբ մը որ կը ջանայ արմատախիլ ընել Պատ. Ֆիլեանի ձեռամբ և անոր օրով տեղի ունեցած ամեն գործ: Վերջերս կազմուած հաշտարար յանձնախմբին համար կըսէ թէ՝ բացի Փրօֆ. Մելգոնէ, Փրօֆ. Մալարեանէ և Մինասեանէ որք այցիլուներ են հոս՝ մնացեալ անդամներն ինքնակոչներ են, և ասոնց մին հրապարակաւ կամբաստանէ իբր «եկեղեցւոյ մէջ բաժանում ձգող անձ»: Նամակագիրն աւելի առաջ երթալով կը հաւաստէ թէ ժողովրդեան այն մասը որ հրատարեալ էլարները ընտրած էր ժամանակին՝ անոնց հրատարիլը ընդունած չէ և նոր ընտրուածներն ալ չի ընդունիր: Եկեղեցւոյ անդամոց թիւը 110 անձերէ կը բաղկանայ եղեր, իսկ անցեալ ընտրութիւնը տեղի ունեցեր է քսան հինգ անձերով միայն:

Թ. Պ. Խնկեան իր նամակաւ սա յայտարարութիւնն ալ կընէ թէ այս բոլոր դժուարութիւնները՝ գոյութիւն ունեցող երկու կուսակցութեանց — յառաջադիմական և պահպանողական — ընդհարումներու արդիւնքն է: Մէկ կուսակցութիւնը կը բաղկանայ հին գըլուխներէ ու հին պատուելիներէ որք կուզեն ամէն ինչ իրենց գիտցած կերպով կարգադրել, իսկ միւս խումբը երիտասարդաց կուսակցութիւնն է որ հիններու ընթացքը տեղական յառաջադիմող ոգոյն հակառակ կը գտնէ: Հները կուզեն եղեր «նոր գինին հին սրուակներու մէջ դնել» ի վնաս եկեղեցւոյ: Նամակագիրը կը վերջացնէ սա խօսքերով թէ «բարի Տէր, ազատէ մեզ այս օրինակ բաներէ»:

Յաւալի է որ այսպիսի նամակներ ու ներքին կռիւներու ձայներն արձագանգ կը գտնեն դարձեալ տեղական մամուլին մէջ որ ժամանակ առաջ՝ նոյն եկեղեցւոյ կռիւներովն սրինքը լեցուց արդէն և սուր լեզուով մը խայտառակեց զմեզ: Ինչ մասնաւոր պէտք կար այս

ՁԵՐ ԱՏԱԽՁՆԵՐԸ ԳՆԵՑԷՔ

Ս. Ա. Փ. Ի. Ռ. Ս.

ԱՏԱԽՁԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷՉՆՅՈ ՔԱԼ.

ԱԸԹՐԸՆ ՓԸՍԻՑԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ Թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը ունիս, կամ եթէ կը փափաքիս Թուրքիա կամ այլուր երթալ, թիքէթի համար դիմէ Սըթըն Փըսիֆիք ընկերութեան օֆիսը: Ամերիկայի սէ է մէկ կէտին համար տոմս կը վաճառէ միևնոյն ընկերութիւնը: Աւելի տեղեկութեանց համար դիմել սա

Ճ. Ֆ. Հիֆսըն Թ. Յ. Պրօսընչան
Տիվիթըն Փասինճըր Էյճընթ: Սիթի թիքէթ Էյճընթ
Քաղաքի գրասենեակը—Թիւ 1013 ձէՑ Փողոց,
Նոր Փաթըրըն Պրաքին առջև

ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՂԲԱՐԻՔ

Պ. մենարարձը գին կը վճարեն

Թ Ո Ւ Զ Ի , Դ Ե Ղ Զ Ի Ո Ի Ա Մ Ե Ն Տ Ե Ս Ս Կ
Զ Ո Ր Պ Տ Ո Ի Ղ Ն Ե Ր Ո Ի :

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ԻՔԱՂԱՔԱՅԻՒՆ

Միալլպօրօ, Մասս.	—	—	Պ. Միքայէլեան
Ուայթ Ինսլիլ,	'	—	Հ. Նիկողոսեան
Ուէսթ Հոպոքըն, Ն.	ձէրդի	—	Հ. Մազուճեան
Պրայթըն, Մասս.	—	—	Գ. Վարդանեան
Պօթըն, Մասս.	—	Սիւրականեան և Գանիէլեան	
Սէլիմ,	'	—	Ս. Թաչճեան
Սըմիթ, Նիւ ձէրդի	—	—	Ս. Հայագործեան
Հէվրի, Մասս.	—	—	Մ. Կարօ
Սէնթըրը Գօր, Մասս.	—	—	Նշան Մինասեան

Ձեր Ապահովագրութեան համար դիմեցէք առ

Պ. Յ. Շեփըրտ եւ Հնկ.

1123 ձէՑ Ըսթրիթ

Պահտնջները փութով կը վճարուին: Յաճախորդ միշտ գոհացում կստանան:

ՃԻՆԹՐՈԹ - ՊՈՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ

Մեծաքանակ վաճառականք Նափայի, Սընժայի ևն. գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶ ԷՑՃԷՆԹՆԵՐ

Բիւմարիլովի ապահով դեղ ձանչցուած ՈՒԻԹՐՆԷ ՍԷՏԻՍԻՆԼ Ղուրբուուն: —Թէլէֆօն, Ուայթ 817:—

անտեղի յայտարարութիւններն ընել տեղական թերթի մը մէջ՝ մենք չենք հասկնար: Միթէ Ամերիկացիք բաւականէն աւելի չի լսեցին ու չի դատափետեցին մեզ այս անտեղի կռիւներուն կամար:

Արդարև Ամերիկացիք ալ կռիւներ կուեննան իրենց եկեղեցիներու մէջ, բայց Հայ երիցականներու կըռիւնները շատ տարբեր եղանակ ու բնութիւն մը ունին:

Պ. Խնկեանի Հետ ըսելու ենք և մենք. "Բարի Աստուած, ազատէ Հայ գաղթականութիւնդ այսօրինակ հրատարակութիւններէ: Խմբ.

—Սահակ Անուշեանի այրած բաղնիքի շինութիւնը դեռ չի լրացած՝ անցեալ Շաբաթ երեկոյ Յակոբ Անուշեանի բաղնիքն ալ հրոյ զոհ գնաց՝ երբ տասէ աւելի հայեր կը յողանային ներսը: Ասոնք ժամանակին յաջողեցան փախչիլ առանց ո՛ր և է վնաս կրելու:

Հրդեհը առաջ եկած էր ծխնելոյղի տաքցած կըղմինդրներէն, որոնցմէ կրակ առած էր շէնքին գոբէթը ու անկէ ալ տարածուած էր ամեն կողմ՝ հրէջ մեքենաներու գալէն առաջ: Անուշեանի կրած վնասը քանի մը հարիւր տողարի չափ է, որ ապահովագրուած է ամբողջովին:

—Նոյն կրակի ժամանակ ներկայ եղողներէն մին՝ Ն. Ստեփանեան՝ դիտելով թէ շէնքին մէկ կողմը նոր բռնկած կը վառէր՝ առանց հրէջներու ուշադրութիւնը գրաւած լինելու, օգնութիւն մը ընելու նպատակաւ՝ քիմիական բաղադրութեանց գործիներու մէկին խողովակը կուղղէ շէնքի այդ մասին ու կը յաջողի կըրակի տարածուիլը մասամբ արգիլել: Պաշտօնեաներէ մին, որ խմած է եղեր, տեսնելով Ստեփանեանի ընթացքը որ նոյն պաշտօնեութեան կողմէ ցոյց տըրուած անհոգութեան արդիւնքն էր անկասկած, կը վազէ ու կուռի կը բռնուի անոր հետ: Այս պահուս հրէջներու գլխաւոր պաշտօնեայն վրայ գալով կը լսէ խնդրոյն մանրամասնութիւնը ու՝ փոխանակ արբեալ պաշտօնեան յանդիմանելու՝ Ստեփանեանը ձերբակալել կուտայ, որոնց գիշեր ազատ արձակուեցաւ՝ երկու ազգայիներու երաշխաւորութեամբ:

Հետեւեալ օրը օտտիկանական դատարարը՝ Տ. Կասկրէյով Ստեփանեանը անմեղ գտաւ:

—Անցեալ երեքշաբթի կէս գիշերի ժամանակ՝ Սընիսայտ այգիի սոջև՝ մեծ ծառին քով՝ ելեքտրական թիւ 3 կառքը՝ Ֆրէզնօ եկած ժամանակ կառքի մը դարնըռուեցաւ որուն մէջ երեք հոգի կային. ասոնց երկուքը անմիջապէս մեռան, իսկ երրորդը՝ ծանրապէս վիրաւորուած է: Աս մարդիկ օրք խմած են եղեր, ելեքտրականքին մօտենայլ տեսած են ժամանակին, բայց անոնց վարիչը՝ հակառակ միւսներու բողոքին՝ մտրակած է ձին ու ջանացած է գիծը անցնիլ՝ ելեքտրական կառքին հասնելէն առաջ. սակայն չի կրնարով յաջողիլ՝ ստակալի բաղխումը յառաջ եկած է իր ստակալի հետեանքով:

—Յ. Հ. Գ. Մ. Իւլնիզէ. Ժողովը նիստ ունի յառաջիկայ Զորեքշաբթի երեկոյ՝ Միութեան սրահին մէջ:

Կը խնդրուի որ անդամք՝ գոնէ այս անգամ՝ հաճին ներկայ գտնուիլ ու միւսութեան առկախ գործերը կարգադրեն կերպով մը: Պաշտօնեայք վհատիլ կակսին անդամներու ցոյց տուած այս տարօրինակ անտարբերութեան համար:

ձ. Մ. Սերրբեան, ձ. Պաննըր, Յ. Մ. Սերրբեան

Սան Ռօքիև Վալի Լուևո Քօ,

ձ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ 954 ԱՅ փողոց, Ֆրէզնօ, Քալիֆօրնիա:

Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամեն տեսակ կալուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

Ֆ Ր Է Ջ Ն Օ

ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ

ԳՐԱՍԵՆԵԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏ ԵՂԻՆ

ԱՅԿՎԷՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ

Թէլէֆօն — — — Մէյն 24

Ֆրէէջնօ, ԲԱԼԻՅՈՐՆԻԱ.

ձ. Ք. ԵՕՔԸՄ,

Սովթ Քօրթ փողոց, Վայսէլիա, Քալիֆօրնիա:

Կը ծանուցանէ թէ 700 էյքրի չափ ստալնակարգ հող ունի Տայնուպայի մօտերը որ այգիի համար շատ յարմարութիւն ունի: Հողին տեսակներն են սև, ծանր, աւաղային և կարմիր: Զուրի իրաւունք հողին հետ: Քանի մը Հայեր գնած ու շատ գոհ մնացած են այս հողերէն: Գներն են՝ 20է մինչև 35 տոլար էյքրը: Պայմանները՝ կարծուածէն աւելի դիւրին: Աւելի մանրամասնութեանց համար գիմել Քաղաքացիի դրասենեակը:

ՄԱՔՍՈՒԷԼ ԵՒ ՄԸՏՃ, ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՔ

Ֆրէզնօ և ձէյ փողոցներուն անկիւնը, Ֆրէզնօ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՔԱԼԻՅՈՐՆԻՈՅ ՄԷՋ ԱՄԵՆԱԼԱԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՆ և

ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԿԸ

ՊԱՏՐԱՍՏԵՆ



Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՃԵՅ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի համար Տարեկան մէկ ու կէս Տոլ. — Վեցամսեայ 75 Սէնթ

Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Տրանզ — — Վեցամսեայ 5 Տրանզ կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033

Բաժանորդագիրը կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ զրամ կը զրկուին Խմբագրութեան հետեւեալ հասցէիւ՝

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published Weekly in the State of California.

H. EQUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՂՆԹ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ. ԴԵԿՏ. 6, 1902

ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

—0—

Սուտ խօսիլը այնքան հին է որքան հին է թերեւս մարդ կենդանին: Սուրբ Գրոց պատմածին նայելով առաջին սուտը Եդեմին մօտերը խօսուեցաւ՝ ստեղծագործութիւնէ քիչ վերջ՝ եզրայրասպանութենէ մը անմիջապէս յետոյ:

Թերեւս կրնանք սուտը մարդասպանութեան անդրանիկ զաւակը նկատել՝ այդ պատմութեան կոթնեղակ:

Եւ արդեօք առաջի սուտը Հայաստանի մէջ խօսուած ըլլալուն համար է որ ստախօսութիւնը խորունկ արմատ ձգած է արեւելեան ժողովրդոց մէջ: Սակայն չի կայ ազգ մը կամ ժողովուրդ մը որուն մէջ ստախօսները չի վիստան այլ և այլ դիմակներու, քօղերու կամ անուններու ներքեւ: Ճշմարտութենէ թերեւս շատ հեռացած չենք ըլլար եթէ խորհինք թէ շատ քիչեր կրցած են այս կեանքի մէջ ազատ մնալ այդ հրապուրիչ հրէշէն որ կը ժպտի ամենուս երեսին: Եւ արդէն սխտորհի պատմութիւնը մէկ մարդու մը համար միայն ըսած է թէ չի ստեղ բնաւ իր բոլոր կեանքին մէջ . . . :

* * * *

Սակայն ստախօսութիւնը որչափ ալ ընդհանրացած ըլլայ մարդոց մէջ՝ տակաւին կը մնայ, ու կը մնայ յաւիտեան խոտելի հակառակորդ մը՝ սխտորի թշնամի մը բարոյականին ընդդէմ: Անոր խորունկ ժպտները փորձութեանց մէջ ձգած են մարդս, վնասած են անոր նկարագրին և շատ անգամ զայն բարոյապէս սպաննած են ընկերակոնութեան առջև: Եւ արդարեւ ստախօսութեան դրօշմը կրող մարդը ամենազբախտներէ

րէն մին է մարդկութեան մեջ: Աշխարհիս վրայ բազմազան կարծուած շատ մը մարդիկ կան սակայն՝ որոնք յետին աստիճան դժբաղատ պիտի ըլլային՝ եթէ ստելու նորիւրու ու օրինական կերպերը հնարուած չըլլային:

Քաղաքակրթեալ ազգաց մէջ սուտը նուիրաչործելու եղանակներ գտնուած են՝ անոր հրապոյրներէն չի զրկուելու համար: Սակայն՝ Քարայրի ըսածին պէս՝ սուտը էշի մը կը նմանի որ իր սկանչները չի կրնար պահել հոգ չէ եթէ մետաքսէ գլխարկով մը անոր անձոնի զլուխը ծածկելու իսկ ըլլաս:

* * *

Երկու գլխաւոր պատճառներ կան որք կը հարկադրեն մարդս սուտ խօսիլ: Այդ պատճառներն են՝ երկիւզն ու ակնկալութիւնը:

Եթէ վախնեւ շահը գոյութիւն չունենային՝ զժուարին պիտի ըլլար մարդոց մէջ ստախօս մը գտնել: Շահամու մարդիկ հարկադրուած են սուտին առջև երկրպագութիւն ընել ընդհանրապէս: Գժուարին է գտնել շահամու մը որ այս կամ այն կերպով իր հպատակութիւնը չի խոտովանի ճշմարտութիւնը կեղծելու թագաւորութեան առջև:

Ոմանք կը ստեն նիւթական շահի համար, ոմանք բարոյական շահու համար, ոմանք ալ՝ երկիւղէ հարկադրեալ:

* * *

Ի զուր է անկեղծութեամբ չի խոտովանիլ թէ սուտ խօսելու ունակութիւնը, որ երկրորդ բնութիւն դարձած է երբեմն սեղեր, բաւական խորունկ արմատ ձգած է մեր մէջ:

Ամեն ուրիշ ազգեր իրենց ստախօսներու բանակները ունին: Այս՝ ճշմարտութիւն է և զայն հերքել ջանացող մը՝ մեր կարծիքը նոր փաստով մը հաստատած կըլլայ միայն: Սակայն մեր մէջ այդ յոռի բնաւորութիւնը, եթէ ներելի է այդպէս անուանել, աւելի ակնհեռ է և շատ աւելի ուշադրութիւն դրաւած է օտարներուն կողմէ:

Կարելի է թէ մենք Հայերս՝ սուտը օրինական մեղամացուցիչ հազուադէպով զարդարելու արհեստը չ'ըլտանայնուս համար է որ աւելի ուշադրութիւն դրաւած ենք ուրիշներուն առջև: Բայց իրողութիւնը կը մնայ թէ սեղացին ընդհանրապէս վստահութիւն չունի Հայու մը խօսքին՝ որովհետեւ սա համոզմամբ տողարուած է անոր միտքը թէ Հայերն ալ՝ արեւելեան ուրիշ ազգաց նման՝ ճշմարտութիւնը չեն խօսիր:

Գարեթէ ի վեր Տաճկի պէս բարբարոս ու կեղեքիչ ցեղի մը բռնութեանց տակ ապրող ուրիշ ազգ մը ստախօսութեան մարմնացումն ու խոտացումը պիտի դառնար թերեւս: Մենք համեմատաբար աւելի քիչ ենք թարկուած ենք այդ շրջանցիչ բնաւորութեան: Եւ իրաւունք ունինք շնորհաւորել մենք զմեզ: Եթէ Թուրքիոյ Հրեաները նկատի առնենք այս մասին՝ մեր վերեւ ըսածները սպասուցանելու շատ յարմար սպասուցոյց մը կը գտնենք զիւրաւ:

Սակայն քիչ որ ալ ըլլայ պատճառը, իրողութիւնը կը մնայ թէ հասարակաց կարծիքը մեզի դէմ է այս մասին: (Մնացեալը յաջորդ թուով)

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

—0—

ԼԱՒԱԳՈՅՆՆԵՐԸ

- Լաւագոյն օրէնքը ոսկեղէն օրէնքն է:
- Լաւագոյն Փիլիսոփայութիւնը՝ գոհ միտքն է:
- Լաւագոյն քաղաքագիտութիւնը ինքզինքդ կառավարելու կարողութիւնն է:
- Լաւագոյն աստուածարանութիւնը՝ մարքուր և ուղորմած կեանք ունենալն է:
- Լաւագոյն պատերազմը՝ մարդկային տկարութեանց դէմ մղուած կռիւն է:
- Լաւագոյն դեղը՝ զուարթ ու ժուժկալ ապրիլն է:
- Լաւագոյն նուագածութիւնը՝ անմեղ մանկան մը ժպտան է:
- Լաւագոյն գիտութիւնն է՝ ամպոս ճանապարհէն արևի մը լոյսը գուրս բերել:
- Լաւագոյն գեղարուեստը՝ մանկութեան ճակտին վրայ երկնոց ժպտը նկարելն է:
- Լաւագոյն կենսագրութիւնն է՝ գրել այն կեանքը որուն մէջ ողորմութիւնը մեծագոյն տեղը կը բռնէ:
- Լաւագոյն հեռագիրն է՝ արևի մը շողը միտել տըխուր սրտի մը մէջ:
- Լաւագոյն մեքենագործութիւնն է՝ շինել հաւատոյ կամուրջ մը մահուան ընդարձակ գետին վրայ:
- Լաւագոյն օրէնագիտութիւնն է՝ խաղաղութեան դաշնագրութիւն մը կնքել խղճիկ հետ:
- Լաւագոյն լրագրութիւնն է՝ ճշմարտան ու ամենագեղեցիկն գրօշմել յիշողութեան հատորին մէջ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Ոմանք զրամ ունին, մանք կայուածներ,
 Ոմանք՝ այգի, պարտէզ, շքեղ պարտաներ.
 Մէկը գուքս է իշխան, մէկը՝ թագաւոր.
 Մին գորք է, զօրական, կամ մեծ դատաւոր:
 Բայց բանաստեղծը, աւաղ, ինչ ունի,
 Որ յաւէտ կը գրէ, կերպէ կը տքնի.
 —Իր ետին բերաւոր երգի կտորներ,
 Կամ փշրած քնարին ջախջախ բեկորներ:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏԻՐ ԶԵՅԹԻՆ ՆԻ ԶԻԹԱԻԻՂ

Մարտիրոսեան Եղբարք,

ԹԻԻ 344 ԷՖ ՓՈՂՈՑ, ՖՐԷՋՆՕ.

Կը ծանուցանեն հասարակութեան թէ խիստ շուփաւոր գներով ի վաճառ հանած են վերջերս տեղաւ կան սև ու կանանչ զէյթին՝ թէ պատրաստուած և թէ անպատրաստ վիճակի մէջ, և շատ ընտիր ու զուտ ձիթախղ: Յանձնարարութիւնը փութով ու խընամով կը կատարուին:

Չէր ոչ Չիրապտոշ

ՕՔԹԱՎ ՏԱՐՃԷԼԻՍ

Գաղղիական Հացագործ.

ԿԸ ՎԱՃԱՌԷ ՆԱԵԻ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ
 1318 ՔԷՅ փողոց — — — Ֆրէզնօ, Քալ.

ՀԱԻԿԻԹԸ ՀԱԻԷՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ

Տքթ. Բիւզանդ Նշիկեան հաւի համար կուտ մը հընարած ու ի վաճառ հանած է ծամանակէ մը ի վեր: Այս նոր կուտը, որ ոչ միայն հաւերը կը պիրցնէ՝ այլ և հաւկիթ ածել կուտայ անոնց, կը գործածուի այժմ թէ Միացեալ Նահանգներուն ամեն կողմերը, և թէ Քալիֆորնիայի և Անգլիոյ մէջ, ուր մեծ ընդունելութիւն գրտած է: Մանրակրկիտ քննութեամբ հաստատուած է թէ մէկ սէնթի այս նորահնար կուտով՝ չորս սէնթ աւելի արդիւնք կտրելի է ձեռք բերել՝ մանաւանդ այս եղանակին երբ երկոտասանեակ մը հաւկիթ զիւրին է ծախել շն սէնթի: Կարծէ փորձել այս կուտէն, որ կը ծախուի քաղաքիս մէջ՝ Քրիմըր և Կրաֆթ վաճառատուններու մէջ, անոր անունն է Միտլէնս Փօլթրի Ֆիլոս: Գիտնալու է թէ հասարակ ցորենի գնէն շատ տարբերութիւն չունի այս հատիկին գինը: Շատեր փորձած ու գոհ մնացած են անկէ ամէն կերպով: Շատ վկայութիւններ արուած են այս մասին: Այս վկայութեանց մէկ բովանդակութիւնը պիտի հրատարակուի քիչ ատենէն ատանձին հատորով: Գնեղէ առաջ յիշելու է թէ այս հատիկներուն տարբեր տեսակները կան: Գնած ժամանակ ըսելու է թէ ձեր ուղածը հաւ զիրցնելու պիտի ծառայէ՝ թէ հաւկիթ ածել տալու համար: Անունը չը մոռնաք:

Midland Poultry Feed.

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

1249 Այ փողոց, Ֆրէզնօ, Քալ.

Թորոս Չրաքեան — — — Ճաշարանատէր Յարգանք կը ծանուցանէ իր յաճախորդներուն և հայ հասարակութեան թէ իր նախկին՝ ձէյ փողոցի ճաշարանէն փոխադրուած է յիշեալ խանութը, ուր նորահնար կարգադրութիւններ ու յաւելումներ բրած է: Կերակուրներու գնին վրայ թէև յաւելում մը չէ եղած, բայց մաքրութիւն, առատութիւն և ընտիր կերակուր սաղ կարենալու համար ամեն նախապատրաստութիւն եղած է, անանկ որ ոչ ոք պիտի ամչնայ զայն Հայկական ճաշարան մը անուանելու: Փորձեցէք մի անգամ:

Կուզենք որ ձեր գնելիք պատի թողթերը, ներկ ու պատկերի չրջանակները մեզմէ ծախու առնէք: Գնելու հետ ընարութեան իրաւունք: Պատի թուղթեր կը փակցունենք, ու կը ներկենք:

Բրոսիւ և Տիք, 1153-1155 Այ փողոց, Էվընճըրի կից:

Վ. ՓԱՐԲԸՐ ԼԱՅԸՆ,
 Կանկարատեսաց Թագաւորի ի
 Ֆրէզնօ, Քալիֆորնիա

ՄԱՆԹԱ ՖԻ

**** ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԼՍԻԱԳՈՅՆ ԳԻԾԸ ****

Ճամբորդին համար ամեն հանգիստ և գիւրութիւն

Սանթա Ֆի երկաթուղեաց ճամբան լաւագոյնը, կարճ ու ամենէ արագն է՝ արեւելք երթալու կամ արեւ յԱ հոս գալու համար:

Ուղղակի շոգենուային և երկաթուղիի տոմսեր Հին Աշխարհի ամեն կողմերուն և ամեն կողմերէն գալու համար: Տոմսի գրամները կրնան հոս վճարուիլ. եթէ տոմսերը չի գործածուին՝ դրամը



ես կը տրուի: Սան Ֆրանսիսկո երկաթուղեաց լաւագոյն ճամբան է այս: Տեղեկութիւններ սիրով կը տրուին թէ՛ կայարանը և թէ՛ քաղաքիս գրասենեակը՝ ի թիւ 1031 ձէյ փողոց, Ֆրէզնո: Թ. Ա. ՃՕՆՍ, Գրօկը:

Ս Ա Ն Թ Ա Ֆ Ի Երկաթուղեաց Ընկերութիւն

Ֆ Ր Է Ձ Ն Օ ԸՆՏԸՐԹ ԷՅՔԻՆԿ ՓԱՐԼԸՐՍ

ՇԱՆՆԸՆ և ՊԻԼ, Տէրեր
1154 ձէյ փողոց, — Ֆրէզնո. — Թէլէֆօն Մէյն 160

ՏԱՆԻՀՈՒ, ԷՄԸՆՍ ԵՒ ԸՆԿ.

ՉՈՒԼՍԾՈՆՆԵՐ, ԵՐԿԱԹ, ՊՈՂՈՊԱՏ, ՄԵՏԱՂ
Երկաթագործներու և Մեքենագործներու վերաբերեալ ամեն անսակ պիտոյքներ, վաւարան, թիթեղեղէնք.

ԵՐԿԱՆԻԻՆՆԵՐ ՈՒ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆՆԵՐ
Երկրորդական սպորանքներ ու 'ֆլըմինկ'
ԱՅ և Մարիփոլա փողոցներու անկիւնը, Ֆրէզնո.

ՈՎԿԻԱՆԸ

Դո՛ւ Ովկիան, է՛ր փրփրած
Կ'եփիս, գոռաս մոլեղին,
Քու սրտիդ մէջ ին՛չ կայ պահուած,
Ին՞չ վէրք ու վիշա ցաւագին:

Ալիքներդ քեզ կը ծեծեն,
Կը զարնուիս ժայռերուն.
Կոհակներդ կը հեծեծեն,
Կը մարանչիս օրն ի բուն:

Բայց հանդարտէ՛, մեծ Ովկիան,
Մի՛ գրփրիր. ցաւ չ'ունիս,
Քու թշնամիդ շատ տկար է,
Դու աշխարհէն վախ չ'ունիս:

Դու հանդարտի՛ր, գաղբիր պահ մը,
Քու խորերդ հանդարտ է.
Անդունդին մէջ պահուած սիրտդ
Անհոգ, անվիշա, անդարդ է:

Դէ՛հ, ալ բաւ է, բաւ է գոռաս,
Ինձ՝ ականջ աուր՝ քեզ պատմեմ՝
Մեր ցաւերը որք վերջ չ'ունին,
Մեր սև բաղբը՝ տխրադէմ:

Քու թշնամիդ տկար հոգն է,
Որ քու սրտիդ չի հասնիր.
Դէ՛մքդ միայն նա կը շոյէ՝
Կ'անցնի՛ չ'երթայ ծայրէ ծիր:

Մեր թշնամին՝ դաժան թուրքը
Հայը կ'այրէ. խիղճ չ'ունի,
Հովի նման շ'անցնիր երթար,
Մեզ կը տանջէ. գու՛թ չ'ունի:

Նա մեզ ջարդեց, ոչնչացուց,
Հրոյ մասնեց մեր աներ.
Մեր հայրենի տունը քանդեց,
Հայ աշխարհն ալ՝ սև աւեր:

Դէ՛հ, Ովկիան, ալ դու լռէ.
Քեզ ո՞վ ջարդեց, մի՛ գոռար,
Քու թշնամին անցնաս է,
Դու չես վախնար, մի՛ եռար:

Թող որ ես լամ, ես աբաստուեմ,
Իմ ցաւերս վերջ չ'ունին.
Քու ոսոխդ դիժոս հոգն է,
Մերինները գու՛թ չ'ունին:

Թող աուր ինձի մօտ դամ ափիդ
Դէրդս պատմեմ, արաստուեմ,
Անդունդներէդ գուցէ ձայն մը,
Արձագանք մը կը լսեմ:

Բայց, անզո՛ւսպ ծով, դու չես լռեր,
Չ'ես խոնարհիր հովին դէմ.
Քու թշնամիդ թէ՛ե տկար,
Դու կը կռուիս անոր դէմ:

Մենք ին՞չ ընենք. չ'ունինք ալիք
Թրքերուն դէմ կռուելու.
Չ'ունինք զէնքեր, չ'ունինք միջոց
Չայն մեր տնէն վանելու:

Ա՛խ, Ովկիան, ձայնիդ մաստաղ,
Դու չ'ես հաճիր օր մ'ալ մեզ
Համար կռուիլ թուրքերու դէմ
Ալիքներովդ փրփրադէդ...:

Հ. Է.



GEORGE BROS.

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒԻ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳԵՐՉԱԿՆԵՐ.

1109 ՃԷՑ Փողոց, — Ֆիսք Պաք — Ֆրէզնօ.
Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ ար-
դէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք
իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ
քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բաղդատարար ու-
րիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և փտահա-
ցնէք դուք զձեզ այս կարևոր կէտին համար. անկէ
յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է
ստանալ ձՕՐՃ ԵՂՐԱՅՐՆԵՐԻՆ:

ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ

Երևտասարդ տղան աղիկ մը կը սրիէ — Այդ իրեն
գիտնալիք գործն է: Գեուատի աղիկը երիտասարդ մը
կը սրիէ — Այդ ալ անոր գիտնալիք բանն է: Աստիք
օր մը կամուսնանան ու պէտքը կըղզան

ՓԱՅՏԻ ԵՒ ԱԾՈՒԽ

ԱՅԳ ԱԼ ՄԵՐ ԳՈՐԾՆ Է

Տօրսից Բապիւնարն Ընկ.

ՆՊԱՐԵՂԷՆ, ԵՐԿՍԹԵՂԷՆ, ԽՈՏ, ԳԱՐԻ ԵՒՆ.
Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնը

Ա Ր Չ Ա Գ Ա Ն Ք

— 0 —

Խմբագիր Քաղաքացիի,

Ազգային Հոգաբարձու Պարոններու՝ ամիսներ
առաջ բրած թելադրութիւնը որ արդէն մտքիս մէջ
կարևոր տեղ մը բռնած էր, և Տքթ. Լօնկի գրած
չահեկան յօդուածը որ հրատարակուեցաւ Քաղաքացիի
Վարդ Թուին մէջ՝ հարկադրեցին զիս արձագանք տալ
այդ պիտանի, օգտակար և անհրաժեշտ եղող ազգա-
յին հիւանդանոցի մը պէտքին:

1888ին երբ հոս հասայ տեղոյս գաղութը մատի վրայ
կը համբէի՝ առանց մատիս և թուղթ գործածելու. իսկ
այսօր թուղթ ու գրիչ գործածելով զժուարաւ կրնամ
գաղթականութեան թիւը ճշգրել:

Գաղթականներու սա հոսանքը դադար առած չէ
տակաւին , և պիտի չառնէ տակաւին: Քանի որ
Ֆրէզնոյի և իր շրջականերու համեղ ու առատ պը-
տուղները, առաջարար կլիման, չոր ու մաքուր օդը,
ճանաչափայլ արեգական լոյսն ու սաքութիւնը և
նիւթական յաշտութիւնն ու յառաջադիմութիւնը կան
ու կը մնան՝ գ'ո շատ մը կղերական և աշխարհական
ուսեալ ու ուսմիկ, Տօքթէօր ու Փրօֆէսօր, դրամա-
տէր ու գործաւոր, առողջ ու հիւանդ անձինք պիտի
գան ու գան:

Քանի որ իրողութիւնը այս է՝ ուստի անտես չը-
նենք հիւանդանոցի մը կարևոր խնդիրը: Թող չըսայ

”ձայն բարբառոյ յանապատի”, այլ աւելի մօտը եր-
թանք խնդրոյն և գործնականի վերածենք զայն:

Եւ որպէսզի հասնինք կէտ նպատակին՝ հրաւեր կը
կարդամ տեղոյս ազգայնոց որ անմիջապէս սկսինք
հետեւեալ կերպով եթէ հաճոյ կը թուի հասարակու-
թեան: Անոնք որ հողատէր են՝ մէկ տարուան համար
էքք գլուխ մէկ տոլար, և անոնք որ այդի կը վարձեն
կամ քրտի (բերք) կը գնեն՝ էքքին կէս տոլար տան.
Իսկ գործաւոր, արհեստաւոր և առևտրական բարեկամ-
ներ թողուն իրենց կամաց:

Երբ Ֆրէզնոցին սա բարեգործութեան ձեռնարկէ՝
վստահ եմ Միացեալ Նահանգաց այլ և այլ տեղիբէն՝
սա բարենպատակ դարձը յառաջ տանելու համար՝ մեծ
ու փոքր նուէրներ պիտի տրուին: Արպէսզի քայլ մը ա-
ռած ըլլանք՝ հրատարակու կը խոստանամ ունեցած
կալուածքիս էքքին մէկ տոլար տալ: (*)

Թող ներուի ինձ սա գիտադութիւնն ալ ընել թէ
գաղթականութիւնը ընդհանուր ժողով մը գումարէ և
ընարէ 7 անձերէ բաղկացեալ մասնախումբ մը որ այս
գործով զբաղի:

ԿԻՐԱԿՈՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Ֆր' գ'նօ, Նոյ. 25:

Հ Ե Ղ Ո Ի Կ 0 Գ

— 0 —

Փրօֆէսօր Փաթի՝ անուանի գիտնականը աստեռ-
խօսութիւն մը ըրաւ վերջերս Սան Ֆրանսիսկոյի մէջ
հեղուկ օդի վրայ, և փորձերով ցոյց տուաւ իր բազ-
մաթիւ ունկնդիրներուն անոր հրաշալի յատկութիւն-
ները որք՝ տարակոյս չի կայ թէ՝ կոչում ունին գի-
տական աշխարհի մէջ նոր յեղափոխութիւն հանելու:

Հեղուկ օդը՝ որ հասարակ ջուրի պէս կը վազէ, սա-
ռոյցէն Յէ՛կ աստիճան աւելի պաղութիւն և զիրոյն
3200 աստիճան վեր սոսկալի տաքութիւն կրնայ ար-
տադրել. կամ արեւելեան բացատրութիւն մը գործա-
ծելով հեղուկ օդը թէ վերին աստիճանի տաք և թէ
վերին աստիճանի պաղ կը փչէ:

Փրօֆէսօրը բազմաթիւ փորձեր ալ ըրած է իր ասե-
նախօսութեան միջոցին: Հեղուկ օդով սաւեցուցած է
ծաղիկ, փայտի կտորներ, թաշկինակ, միս և կանանչ-
եղևներ: Նոյն հեղուկով սառած սնդիկէ՝ մուրճ մը շի-
նած ու զայն յարմարցուցած է իր գաւազմանի ծայրին:
Գրչի երկաթեայ ծայրեր հալեցուցած է անոր ար-
տադրած տաքութեամբ. սառի կտորը եփած, անհե-
տացուցած և վերածած է չոր վիճակի մը: Ատենախօսը՝
կաթսայի մը տակ վառող կրակի բոցերը սառեցուցած
ու զայն բարակ մը տեղացող ձիւնի վերածած է՝ նոյն
օդի զօրութեամբ:

Եթէ այս ամենը դար մը առաջ ըրած ըլլայի, ըսած
է ատենախօսը, մարդիկ զիս վհուկ մը կամ հրաշագործ
մը պիտի կարծէին, բայց այսօր գիտութիւնը պարզած
է այս ամենը: Գեռ ո՛վ գիտէ որչափ պաղտնիքներ
կը քնանան բնութեան կակուղ ծոցին մէջ:

(*) Պ. Կ. Յովհաննէսեան ունի 60 տրտափար ա գի:
Ծ. Խմբ

*** ՈՍԿԵՓՈՐԻԿ ***

—*—

** Ամեն տեսակ սերմեր՝ Թ. Ճ. Համբնտի քով:

**Նթէ կուզես հաւերուդ հաւկիթ ամել տալ բոնի կերպով Տըթ. Նշիկեանի հնարած Միտլենտ Փօլթրի Ֆիտէն գնէ անոնց համար:

** Միացեալ Նահանգաց Գանձին մէջ աւելի ոսկի կայ Հիմայ քան աշխարհիս կառուարութեանց ու է մէկի գանձին մէջ գտնուած է երբէք: Այս մասին Ռուսիա միայն կրցած է քիչ մը մօտենալ Ընքըլ Սամին՝ երբ 1897ին 598 միլեոնի ոսկի ունեցաւ իր գանձին մէջ: Այսօր Ռուսիա իր գանձի մէջ ունի 363 միլիոն տորարի ոսկի, Գաղիա ունի՝ 509, Գերմանիա՝ 234, Աւստրիա Հունգարիա 221, Անգլիա՝ 183, Իսկ Մ. Նահանգները՝ 620 միլիոնի չափ:

Քայց Թուրք կառավարութեան գանձին մէջ ոսկիի հօտն անգամ չէ մնացեր:

**Շիքակոյի արհեստահանդիսի ժամանակ ճարտնէն տեսակ մը որթատունկ բերուած էր Ամերիկա՝ Քուտզու որթ անունով: Այս տունկը աշխարհիս ամենէ աւրագ աճողն է իր տեսակին մէջ. երեք ամսուան մէջ անոր ճիւղերը 60 սոք բարձրութեան կը հասնին:

Ամերիկեան ամառները թէև շատ նոստատաւոր չեն եղած այս տունկին՝ բայց այսու հանդերձ անոր բարձր հասակէն շատ չեն կրցած կտրատել:

Մեր Տրէզնոյի որթերն ալ եթէ այդ բարձրութեան հասնէին ու նոյն համեմատութեամբ պատու տալու ըլլային գէշ չէր ըլլար անշուշտ:

**Կը պատմուի թէ Գիոգինէս իր երիտասարդութեան ժամանակ Նաքօս կղզիի մէջ ճամբորդած ժամանակ նոր ծիլ սկսող տունկ մը կը տեսնէ, ու կուզէ զայն իրեն երկիրը փոխադրել. կը հանէ տունկը ու թռչնոյ մը ոսկորին մէջ կը զետեղէ զայն՝ սրպէսզի մի գուցէ փնտռուի: Ժամանակ մը վերջ կը տեսնէ որ տունկը ոսկորին երկու կողմերու ծակերէն ծիլ ու դուրս գալ սկսած է: Այս անգամ ճամբորդը առիւծի մը ոսկոր գտնելով տունկն ու իր պատեանը անոր մէջ կը զետեղէ. մի քանի օրէն՝ տունկը աճած ըլլալով առիւծի ոսկորին երկու կողմերէն ալ իւր փափուկ թևերը դուրս կարձակէ: Վերջի անգամ ճամբորդը էշի մը գանկին մէջ կը տեղաւորէ տունկն և անոր պատեանները՝ սրպէսզի կարողանայ զայն ապահովարար իր երկիրը հասցնել: Գիոգինէս սունն հասած ժամանակ կը տեսնէ որ անկարելի էր տունկը իւր երեք պատեաններէն դուրս հանել, ուստի անոնց հետ միասին հողին մէջ կը գնէ ու կակսի խնամել զայն: Տունկը կը մեծնայ, կը ծիլ, ու քաղցր պտուղ մը կուտայ: Խաղողն էր այդ: Գիոգինէս անոր ջուրը քամեց ձրմբան համար պահելու: Եւ առաջին գինին շինած էր:

Արդ՝ երբ մարդիկ անկէ կը խմեն քիչ մը՝ աղաւնիի պէս հեղ կը դառնան. երբ քանի մը գաւաթ աւելի կը տնկեն՝ առիւծ կը կարին, բայց երբ չափազանցութեան կիրթան՝ իշու մը կը նմանին՝ ստամալով անոր բնաւորութիւնն ու յատկութիւնները այն էշի

գանկէն որ պատուարած էր անմեղ տունկը իր մանկութեան ժամանակ:

Այս պատմութիւնը իրողութիւն չէ, բայց գինիին տեսակէտէն նայելով ճշմարտութիւն մ'է անշուշտ:

Առեւտրական Կոտորած

Ա. ԸՍԹԱՔ

Հանդերձախաձառ

Թանքակիվինկի առթիւ՝ գները կէսի բաժնուած են: 1027 ձէյ փողոց, — — — Տրէզնօ, Քալ.

Գ.ՆԱ. ԱՌ

ՊԱՐԻԹ ՀԻՔՍ ԸՆԿ.

ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊԱՏԵԱՅ ԲԱՆՁԵՐՈՒ, ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ

1035-1041 ԱՅ ՓՈՂՈՅ ԹԷԼԷՖՈՆ
ՏՐԷՉՆՅՈ, ՔԱԼ ԷՔՅԷՆՆՆ — ԹԻՒ 2

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄ

Կիլիկիոյ Լեւոն և Շեթում թագաւորներու այլ և այլ դրամներ:

Հայոց հին փառաց այս կենդանի յիշատակներէն Կարժէ որ ամեն Հայ ունենայ:

Մենդեան համար ամենափափաքելի նուէր: Հեթում թագաւորին դրամներուն (արծաթեայ) իւրաքանչիւրը մէկ տօլար:

Լեւոն թագաւորին դրամներուն (արծաթեայ) իւրաքանչիւրը երկու տօլար:

Կիլիկիոյ այլևայլ պղնձեայ դրամներ, իւրաքանչիւրը 50 սէնթ:

Դրամները սուանց ծակի են: Գնել փափաքողները գիմելու են հետեւեալ հասցէին

Paul S. Ourfalian,
336 S. Olive St ; Los Angeles, Cal.

DR. GAZARIAN DENTIST

Տրք. Յ. Ղազարեան,

Ա.Տ.Ա.ՄՆ.Ա.Գ.ՈՐԾ ԵՒ Ա.Տ.Ա.ՄՆ.Ա.Բ.ՈՅԺ
Չանս Պաք, ԱՅ Ըսթրիթ, Տրէզնօ, Քալ.

Գոհացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գոհացում Յաճախորդներուն: Գիները միշտ չափաւոր:

Թէլէֆօն — — — — — Ուայթ 231